ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-2

ք. Երևան « 11 » օգոստոսի 2023թ.

ՀՀ դատախազությունն ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Ափրիկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ>>ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Հ. Ֆարամազյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տվյալների պահոցի տրամադրման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 201600000 (երկու հարյուր մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1

կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը,

ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

7.14 Սույն պայմանագրի դրույթների գործողությունը տարածվում է 2023 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ դատախազություն	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք.Երևան, Վ.Սարգսյան 5	ք. Աբովյան, Խաղաղության 1
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011180081	Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 02506634	ՀՎՀՀ 00096001
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

[2] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 11 » օգոստոսի 2023թ. կնքված
N ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
2	72211197/506	Տվյալներ պահոց S3(Object storage capacity S3)՝ համակարգչային տվյալները պահելու համակարգ: Ծառայության ծավալը՝ 2ՊտԲ: Ծառայության մատուցման ժամկետը՝ ծառայության ակտիվացման պահից 24 ամիս: Ծառայությունն իր մեջ ներառում է հասանելիությունների վերահսկողության համակարգ, տարբերակների վերահսկողություն (versioning control), ինչպես նաև հնարավորություն տվյալների պահոցի մակարդակում <<ընթերցման-գրանցման-փոփոխման>> իրավասությունների կարգաբերման ապահովման մասով: Տվյալների կենտրոնին առաջադրված պարտադիր պահանջների ցանկ. 1. Տվյալների կենտրոնը և բոլոր մուտքերը պետք է լինեն 24/7 տեսամոնիտորինգի վերահսկողության տակ: Տեսագրությունները պետք է պահպանվեն ամբողջական ծավալով՝ առնվազն 3 ամիս: 2. Տեսագրությունները կարող են տրամադրվել Պատվիրատուի պահանջով և միայն վերջինիս կողմից արտոնագրված անձանց: 3. Բոլոր այցերը տվյալների կենտրոն պետք է գրանցվեն մատյաններում անվտանգության անձնակազմի կողմից և ապահովեն այց կատարող անձի նույնականացումը: Մատյանները պետք է պահվեն առնվազն 3 ամիս: 4. Տվյալների կենտրոնի բոլոր ենթահամակարգերը (այն է՝ էլեկտրասնուցում, հովացում, հրդեհի զսպման համակարգ և այլն), պետք է լինեն փոխարինելի (redundant) և վերահսկվեն տվյալների կենտրոնի սպասարկող անձնակազմի կողմից 24/7:5. Տվյալների կենտրոնի միջավայրի պարամետրերը (առնվազն ջերմություն և խոնավություն) պետք է վերահսկվեն տվյալների կենտրոնի սպասարկող անձնակազմի կողմից 24/7: 6. Տվյալների կենտրոնը պետք է ունենա բարձր արագությամբ (առնվազն	դրամ	144 000 000, որից 1-ին փուլ 36 000 000	1	ՀՀ	1-ին փուլ՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 30.12.2023թ. 2-րդ փուլ՝ 2024 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2024թ. 3-րդ փուլ՝ 2025 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.06.2025թ.

		10000 մբ/վ) և հուսալի ցանցային ենթակառուցվածք՝ փոխարինելի ցանցային սարքերով (redundant routers, switches, and firewalls): 7. Բոլոր փոփոխությունները պետք է գրանցվեն գրանցամատյաններում, որոնք պետք է պահպանվեն առնվազն 3 ամիս: Լրացուցիչ պայմաններ՝ Ծառայությունների ակտիվացման օրը Պատվիրատուին տրամադրել տվյալների պահոցի ադմինիստրատիվ մուտքի իրավունք, որի տրամադրմամբ Օպերատորն այլևս չի ունենում հնարավորություն մտնելու տվյալների պահոցի համակարգ: Տվյալների պահոցի 80% լրանալուն պես, 5 օրվա ընթացքում, տեղեկացնել Պատվիրատուին: Տվյալների կենտրոնների համար՝ վնասված կրիչների ոչնչացման ընթացակարգ համաձայնեցված Պատվիրատուի հետ: Տեխնիկական պլանային աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում նախապես համաձայնեցնել աշխատանքների կատարման օրը և ժամային ինտերվալը Պատվիրատուի հետ: Ծառայությունները պետք է հասանելի լինեն տարեկան առնվազն 99,99%-ով:					
4	72211197/508	Տվյալներ պահոց S3(Object storage capacity S3)՝ համակագչային տվյալները պահելու համակարգ: Ծառայության ծավալը՝ 280ՏԲ: Ծառայության մատուցման համար օգտագործվող ֆիզիկական ենթակառուցվածքը տեղակայվում է Պատվիրատուի կողմից նշված հասցեում: Ծառայության մատուցման ժամկետը՝ ծառայության ակտիվացման պահից 24 ամիս: **Նախատեսվում է օգտագործել առանձնահատուկ պաշտպանություն ունեցող քրեական վարույթների համար:** Ծառայությունն իր մեջ ներառում է հասանելիությունների վերահսկողության համակարգ, տարբերակների վերահսկողություն (versioning control), ինչպես նաև հնարավորություն տվյալների պահոցի մակարդակում <<ընթերցման-գրանցման-փոփոխման>> իրավասությունների կարգաբերման ապահովման մասով: Տվյալների կենտրոնին առաջադրված պարտադիր պահանջների ցանկ. 1. Տվյալների կենտրոնը և բոլոր մուտքերը պետք է լինեն 24/7 տեսամոնիտորինգի վերահսկողության տակ: Տեսագրությունները պետք է պահպանվեն ամբողջական ծավալով՝ առնվազն 3 ամիս: 2. Տեսագրությունները կարող են տրամադրվել Պատվիրատուի պահանջով և միայն վերջինիս կողմից արտոնագրված անձանց: 3. Բոլոր այցերը տվյալների կենտրոն պետք է գրանցվեն մատյաններում անվտանգության անձնակազմի կողմից և ապահովեն այց կատարող անձի նույնականացումը: Մատյանները պետք է պահվեն առնվազն 3 ամիս: 4. Տվյալների կենտրոնի բոլոր ենթահամակարգերը (այն է՝ էլեկտրասնուցում,	դրամ	57 600 000, որից 1-ին փուլ 14 400 000	1	<<	1-ին փուլ՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 30.12.2023թ. 2-րդ փուլ՝ 2024 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.12.2024թ. 3-րդ փուլ՝ 2025 թվականին պայմանագրի համար ֆինանսական միջոց նախատեսվելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրվանից մինչև 30.06.2025թ.

		հովացում, հրդեհի զսպման համակարգ և այլն), պետք է լինեն փոխարինելի (redundant) և վերահսկվեն տվյալների կենտրոնի սպասարկող անձնակազմի կողմից 24/7:5. Տվյալների կենտրոնի միջավայրի պարամետրերը (առնվազն ջերմություն և խոնավություն) պետք է վերահսկվեն տվյալների կենտրոնի սպասարկող անձնակազմի կողմից 24/7: 6. Տվյալների կենտրոնը պետք է ունենա բարձր արագությամբ (առնվազն 10000 մբ/վ) և հուսալի ցանցային ենթակառուցվածք՝ փոխարինելի ցանցային սարքերով (redundant routers, switches, and firewalls): 7. Բոլոր փոփոխությունները պետք է գրանցվեն գրանցամատյաններում, որոնք պետք է պահպանվեն առնվազն 3 ամիս: Լրացուցիչ պայմաններ՝ Ծառայությունների ակտիվացման օրը Պատվիրատուին տրամադրել տվյալների պահոցի ադմինիստրատիվ մուտքի իրավունք, որի տրամադրմամբ Օպերատորն այլևս չի ունենում հնարավորություն մտնելու տվյալների պահոցի համակարգ: Տվյալների պահոցի 80% լրանալուն պես, 5 օրվա ընթացքում, տեղեկացնել Պատվիրատուին: Տվյալների կենտրոնների համար՝ վնասված կրիչների ոչնչացման ընթացակարգ համաձայնեցված Պատվիրատուի հետ: Տեխնիկական պլանային աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում նախապես համաձայնեցնել աշխատանքների կատարման օրը և ժամային ինտերվալը Պատվիրատուի հետ: Ծառայությունները պետք է հասանելի լինեն տարեկան առնվազն 99,99%-ով:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«11» օգոստոսի 2023թ. կնքված
N ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	72211197/506	ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՀՈՑԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	18000.0	18000.0	36000.0	36000.0	36000.0	**36000.0**
4	72211197/508	ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՀՈՑԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7200.0	7200.0	14400.0	14400.0	14400.0	**14400.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ		25200.0	25200.0	50400.0	50400.0	50400.0	**50400.0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«11» օգոստոսի 2023թ. կնքված
N ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության																
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	***Ֆինանսավորումը կիրականացվի 2024թ. և 2025թ անհրաժեշտ ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կքելու միջոցով:***													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	72211197/506	ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՀՈՑԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
4	72211197/508	ՏՎՅԱԼՆԵՐ ՊԱՀՈՑԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 11 » օգոստոսի 2023թ. կնքված
N ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանա

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«11» օգոստոսի 2023թ. կնքված
N ՀԳԴ-ՀՄԱԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանա

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն